Տեղեկագիրը հիմնադրվել է 2022թ. ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի
Գիտական խորհրդի որոշման համաձայն

Бюллетень основан в 2022г. по решению Ученого совета
ГНО « Национальный центр по контролю
и профилактике заболеваний» МЗ

Bulletin was founded in 2022 by the decision of the Scientific Council of the National Center of Disease Control and Prevention SNCO, MOH

Գլխավոր խմբագիր՝ բ.գ.դ., պրոֆեսոր Մելիք-Անդրեասյան Գ.
Խմբագրական խորհուրդ՝ Աբովյան Ռ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Ալեքսանյան Յու., բ.գ.թ. Ավետիսյան Լ., Բակունց Ն.,Գրիգորյան Ս.,
Սահակյան Գ., բ.գ.թ. Վանյան Ա.

Քարտուղարություն՝ Զաքարյան Ս., Հովհաննիսյան Մ.

Главный редактор д.м.н. профессор Мелик-Андреасян Г.
Редакционный совет: Абовян Р., к.м.н. Аветисян Л.,
академик НАН РА Алексанян Ю., Бакунц Н.,
к.м.н.Ванян А., Григорян С., Саакян Г.

Секретариат: Закарян С., Оганесян М.

Editor-in-Chief DSc., Professor Melik-Andreasyan G.
Editorial Board: Abovyan R., academician NAS RA Aleksanyan Yu.,
PhD Avetisyan L., Bakunts N., Grigoryan S.,
Sahakyan G., PhD Vanyan A.

Secretariat: Hovhannisyan M., Zakaryan S.

ԱՄՍԱԿԱՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

MONTHLY EPIDEMIOLOGICAL BULLETIN

ЕЖЕМЕСЯЧНЫЙ ЭПИДЕМИОЛОГИЧЕСКИЙ БЮЛЛЕТЕНЬ

COVID-19-ՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ:
ԱՂԻՔԱՅԻՆ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՌՆԿՈՒՄՆԵՐ

COVID-19 SITUATION IN THE REPUBLIC OF ARMENIA.
OUTBREAKS OF INTESTINAL INFECTIOUS DISEASES

ЭПИДЕМИОЛОГИЧЕСКАЯ ОБСТАНОВКА ПО КОРОНАВИРУСНОЙ БОЛЕЗНИ (COVID-19) В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ.
ВСПЫШКИ КИШЕЧНЫХ ИНФЕКЦИОННЫХ ЗАБОЛЕВАНИЙ

ՀՈՒԼԻՍ 2022

JULY 2022

ИЮЛЬ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
CONTENTS
СОДЕРЖАНИЕ

- ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ (COVID-19) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ
- ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ (COVID-19) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՀ-ՈՒՄ ՀՈՒԼԻՍԻ 4-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
- ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆՈՐ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ԵՎ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ
- ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ՀՈՒԼԻՍԻ 5-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ
- ԿՈՐԱՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ
- COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՍԵՌԻ ԵՎ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ
- ԱՂԻՔԱՅԻՆ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՌՆԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

- COVID-19 SITUATION IN THE WORLD
- COVID-19 SITUATION IN THE REPUBLIC OF ARMENIA AS OF JULY 4
- NEWS, NEW VARIANTS AND NEW APPROACHES IN THE FIGHT AGAINST COVID-19
- COVID-19 VACCINATION IN REPUBLIC OF ARMENIA AS OF JULY 5: STATISTICAL DATA
- COVID-19 VACCINES EFFECTIVENESS IN THE REPUBLIC OF ARMENIA
- COVID-19 VACCINATION COVERAGE BY GENDER AND AGE GROUP
- INTESTINAL INFECTIOUS DISEASE OUTBREAKS IN THE REPUBLIC OF ARMENIA

- ЭПИДЕМИОЛОГИЧЕСКАЯ ОБСТАНОВКА ПО КОРОНАВИРУСНОЙ БОЛЕЗНИ В МИРЕ
- ЭПИДЕМИОЛОГИЧЕСКАЯ ОБСТАНОВКА ПО КОРОНАВИРУСНОЙ БОЛЕЗНИ (COVID-19) В АРМЕНИИ ПО СОСТОЯНИЮ НА 4 ИЮЛЯ
- НОВОСТИ, НОВЫЕ ВАРИАНТЫ И НОВЫЕ ПОДХОДЫ В БОРЬБЕ С КОРОНАВИРУСНОЙ БОЛЕЗНЬЮ
- ВАКЦИНАЦИЯ ПРОТИВ КОРОНАВИРУСНОЙ БОЛЕЗНИ (COVID-19) В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ ПО СОСТОЯНИЮ НА 5 ИЮЛЯ: СТАТИСТИЧЕСКИЕ ДАННЫЕ
- ЭФФЕКТИВНОСТЬ ВАКЦИНАЦИИ ПРОТИВ COVID-19
- ОХВАТ ВАКЦИНАЦИЕЙ COVID-19 ПО ПОЛУ И ПО ВОЗРАСТНЫМ ГРУППАМ
- ВСПЫШКИ КИШЕЧНЫХ ИНФЕКЦИОННЫХ ЗАБОЛЕВАНИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

ՀՈՒԼԻՍ 2022

JULY 2022

ИЮЛЬ 2022

COVID 19-ՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Աշխարհում COVID-19-ով պայմանավորված համաճարակային իրավիճակը ներկայումս հարաբերական կայուն է: Հուլիսի 4-ի դրությամբ (11:32pm CEST) աշխարհում արձանագրվել է հիվանդության 554,455,663 հաստատված դեպք, որից նոր դեպքերը՝ 832.420, իսկ մահվան ելքով դեպքերը՝ 6,361,600 (1.14%):[1][2] Դեպքերն արձանագրվել են 223 երկրում, իսկ առավել բարձր հիվանդացություն արձանագրող երկրների ցանկում են՝

Երկիր	Արձանագրված դեպքեր
ԱՄՆ	**89,533,825**
Հնդկաստան	**43,518,564**
Բրազիլիա	**32,502,469**
Ֆրանսիա	**31,208,925**
Գերմանիա	**28,394,995**
Միացյալ Թագավորություն	**22,741,065**
Ռուսաստանի Դաշնություն	**18,439,759**
Կորեա	**18,395,864**
Իտալիա	**18,768,871**
Թուրքիա	**15,123,331**
Իսպանիա	**12,818,184**

Աղյուսակ 1. Առավել բարձր հիվանդացություն արձանագրող երկրների ցանկ

1 https://covid19.who.int/
2 https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019



Գծապատկեր 1. Դեպքերի համամասնությունն՝ ըստ ԱՀԿ տարածաշրջանների

COVID 19-ՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՀ-ՈՒՄ

2022 թվականի հուլիսի 4-ի դրությամբ ՀՀ-ում արձանագրվել է 423417 դեպք (հ.գ. ըստ 100.000 բն.՝ 14309.5), որից՝ 290-ը (0.1%) ստանում է բուժում, 412817 (97.4%) անձ առողջացել է, 8626 դեպքում (հ.գ. ըստ 100.000 բն.՝ 291.5) արձանագրվել է մահվան ելք, մահաբերությունը կազմում է 2%:

Վերջին 14 օրվա ընթացքում արձանագրվել է հիվանդության 313 դեպք (հ.գ. 10.6 դեպք ըստ 100.000 բնակչության), ինչը նախորդ նույն ժամանակահատվածի համեմատ (98 դեպք, հ.գ. 3.3 դեպք ըստ 100.000 բնակչության) աճել է 219 %-ով:

Թեստավորման դրական արդյունքների մասնաբաժինը վերջին 14 օրվա ընթացքում կազմել է 3.1%՝ նախորդ 14-օրյակի 0,5 %-ի փոխարեն:

Վերջին 7 օրվա ընթացքում արձանագրվել է հիվանդության 174 դեպք, ինչը նախորդ նույն ժամանակահատվածի համեմատ (139 դեպք) աճել է 25%-ով:

Թեստավորման դրական արդյունքների մասնաբաժինը վերջին 7 օրվա ընթացքում կազմել է 3.4%, նախորդ շաբաթվա 2.8%-ի փոխարեն:

Այս պահի դրությամբ վարակի վերարտադրողականության ցուցանիշը (7 օրվա հաշվարկով) կազմում է Rt=1.28:

Աղյուսակ 2. COVID-19-ի դեպքերը՝ ըստ սեռատարիքային խմբերի

Տարիքային խումբ	դեպքերի թիվ 6/6/2022 - 6/19/2022		դեպքերի թիվ 6/20/2022 - 7/3/2022	
	արական	իգական	արական	իգական
18-29	10	9	40	39
30-59	45	30	98	120
60+	0	0	0	0
Ընդհանուր	**55**	**39**	**138**	**158**
	94		**297**	

Գծապատկեր 1. COVID-19-ի դեպքերը՝ ըստ սեռատարիքային խմբերի



Նկար 1. COVID-19-ի հիվանդացությունը՝ ըստ սեռատարիքային խմբերի



Վերջին 14 օրվա ընթացքում արձանագրվել է հիվանդության 10.6 դեպք ըստ 100.000 բնակչության, իսկ թեստերի դրական արդյունքների մասնաբաժինը վերջին 14 օրվա ընթացքում կազմել է 3.1%, ինչն ըստ Եվրամիության չափանիշների համարվում է «կանաչ գոտի»: 2 շաբաթ առաջ վերը նշված ցուցանիշները համապատասխանաբար եղել են 3.3 դեպք՝ ըստ 100.000 բնակչության, և թեստերի դրական արդյունքների մասնաբաժինը 0.5%:[3]

3 https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2021/06/14/covid-19-council-updates-recommendation-on-free-movement-restrictions/

Գծապատկեր 2. Ռիսկի գոտիները՝ ըստ Եվրամիության չափանիշների



Dark red area: very high risk

More than 500 cases / 100 000 people

Red area: high risk

Between 50 and 500 cases / 100 000 people
Positive test: 4% or more

Between 150 and 500 cases / 100 000 people
Positive test: less than 4%

Orange area: medium risk

Less than 50 cases / 100 000 people
Positive test: 4% or more

Between 25 and 150 cases / 100 000 people
Positive test: less than 4%

Green area: low risk

Less than 25 cases / 100 000 people
Positive test: less than 4%

«Անհանգստություն առաջացնող» Variants of concern (Voc) տեսակների ցուցակ ընդգրկվում են կորոնավիրուսային հիվանդության առավել վտանգավոր տեսակները, որոնց մուտացիաներն ավելացրել են կորոնավիրուսային հիվանդության՝ մարդուց մարդ փոխանցվելու արագությունը, փոխել են հիվանդության ախտանշանները, կամ դարձրել են այն ավելի կայուն պատվաստանյութերի, դեղորայքի նկատմամբ:

ԱՀԿ անվանում	Առաջին անգամ արձանագրվել է	Արձանագրման տարեթիվ	Որոշման ամսաթիվ
Omicron BA.1	Հարավային Աֆրիկա	2021թ. նոյեմբեր	27.11.2021թ.
Omicron BA.2	Ֆիլիպիններ	2021թ. նոյեմբեր	22.02.2022թ.
Omicron BA.4	Հարավային Աֆրիկա	2022թ. հունվար	
Omicron BA.5	Հարավային Աֆրիկա	2022թ. փետրվար	

«Հետաքրքրություն ներկայացնող» Variants of interest (VOI) տեսակների ցուցակ ընդգրկվում են կորոնավիրուսային հիվանդության այն տեսակները, որոնցով վարակման ավելի ու ավելի շատ դեպքեր են արձանագրվում, և որոնք տարածվում են ավելի շատ տարածաշրջաններում, ինչպես նաև առկա են հաստատված տվյալներ, որ դրանց մուտացիաները կարող են փոխել վիրուսի հատկությունները:

ԱՀԿ անվանում	Առաջին անգամ արձանագրվել է	Արձանագրման տարեթիվ	Որոշման ամսաթիվ
Omicron BA.2 +L452X (x)	n/a		

«Դեէսկալացված տարբերակներ» կորոնավիրուսային հիվանդության այն տեսակներն են, որոնք՝ 1) այլևս չեն շրջանառում 2) շրջանառում են բավականին երկար ժամանակ՝ չթողնելով որևէ էական ազդեցություն համաճարակային իրավիճակի վրա 3) գիտական հիմնավորումներ են ի հայտ եկել, համաձայն որոնց տարբերակը որևէ կապ չունի իրեն վերագրած հատկանիշների հետ:

ԱՀԿ անվանում	Առաջին անգամ արձանագրվել է	Արձանագրման տարեթիվ	Որոշման ամսաթիվ
Alpha	Մեծ Բրիտանիա	2020թ. սեպտեմբեր	VOC՝ 29.12.2020թ. De-escalation՝03.09.2021թ.
Delta	Հնդկաստան	2020թ. դեկտեմբեր	24.05.2021թ
Eta	Մեծ Բրիտանիա/Նիգերիա	2020թ. դեկտեմբեր	VOI՝ 22.04.2021թ De-escalation՝03.09.2021թ
Kappa	Հնդկաստան	2020թ. դեկտեմբեր	VOI՝ 22.04.2021թ De-escalation՝03.09.2021թ
Iota	ԱՄՆ	2020թ. դեկտեմբեր	VUM՝ 29.04.2021թ. De-escalation՝03.09.2021թ
Theta	Ֆիլիպիններ	2021թ. հունվար	VOI՝ 22.04.2021թ De-escalation՝03.09.2021թ
Zeta	Բրազիլիա	2021թ. հունվար	VUM՝ 29.04.2021թ. De-escalation՝03.09.2021թ
Epsilon	ԱՄՆ	2020թ. դեկտեմբեր	VOI՝ 22.04.2021թ De-escalation՝22.07.2021թ

Mu	Կոլումբիա	2021թ. հունվար	VOI՝ 29.04.2021թ De-escalation՝09.03.2022թ.
Lambda	Պերու	2020թ. դեկտեմբեր	VOI՝ 22.07.2021թ De-escalation՝ 09.03.2022թ.
Beta	Հարավային Աֆրիկա	2020թ. սեպտեմբեր	VOI՝ 29.12.2020թ De-escalation՝09.03.2022թ
Gamma	Բրազիլիա	2020թ. դեկտեմբեր	VOI՝ 29.12.2020թ De-escalation՝09.03.2022թ
XD (Delta+Omicron BA.1)	Ֆրանսիա	2022թ. հունվար	VUM՝ 09.03.2022թ
«Մոնիթորինգի ցուցակ» Alerts for Further Monitoring (VUM) ԱՀԿ-ն ներառում է կորոնավիրուսային հիվանդության այն տեսակները, որոնց մուտացիաները կարող են փոխել վիրուսի հատկությունները և հետագայում վտանգ ներկայացնել: Այս տեսակների մասին քիչ տեղեկատվություն է հայտնի դրանց՝ «հետաքրքրություն ներկայացնող» տեսակների ցուցակ ընդգրկելու համար:			
ԱՀԿ անվանում	**Առաջին անգամ արձանագրվել է**	**Արձանագրման տարեթիվ**	**Որոշման ամսաթիվ**
Omicron BA.3	Հարավային Աֆրիկա	2021թ. նոյեմբեր	

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ՀՈՒԼԻՍԻ 5-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

2022 թվականի հուլիսի 5-ի դրությամբ ամբողջ աշխարհում իրականացվել է ավելի քան 12.12 մլրդ դեղաչափ պատվաստում: Ամբողջ աշխարհի բնակչության մոտ 66.7%-ը ստացել է կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստում: Օրական կատարվում է 6.08 մլն դեղաչափ պատվաստում ամբողջ աշխարհում: COVID-19-ի դեմ ամբողջական պատվաստումներում բնակչության շրջանում առավել բարձր ընդգրկվածություն գրանցվել է Արաբական Միացյալ Էմիրություններում՝ 98.01%, Սինգապուրում՝ 91.65%, Չիլիում՝ 91.54%, Կուբայում՝ 88.14%:[4]

Հայաստանի Հանրապետությունում 05.07.2022թ. դրությամբ կատարվել է 2217618 պատվաստում: 1 դեղաչափ 1138990 պատվաստում, որից՝ 219933 «ԱստրաԶենեկա», 49744 դեղաչափ «Կորոնավակ», 173706 դեղաչափ «Սպուտնիկ-Վ», 486706 դեղաչափ «Սինոֆարմ», «Մոդեռնա՝ 183489 դեղաչափ, «Կովիշիլդ»՝ 310 դեղաաչափ, «Սպուտնիկ Լայթ»՝ 6762 դեղաչափ, «Պֆայզեր»՝ 18329 դեղաչափ, «Յանսեն»՝ 11 դեղաչափ: Երկրորդ դեղաչափ կատարվել է 1019409 պատվաստում, այդ թվում «ԱստրաԶենեկա»՝ 189485 դեղաչափ, «Կորոնավակ»՝ 47056 դեղաչափ, «Սպուտնիկ-Վ»՝ 163584 դեղաչափ, «Սինոֆարմ»՝ 438988 դեղաչափ, «Մոդեռնա»՝ 161599 դեղաչափ, «Կովիշիլդ»՝ 125 դեղաչափ, «Պֆայզեր»՝ 18572 դեղաչափ: Բուստեր դեղաչափ՝ 59219 պատվաստում, այդ թվում՝ «ԱստրաԶենեկա»՝ 6740, «Կորոնավակ»՝ 473 դեղաչափ, «Սպուտնիկ-Վ»՝ 1608 դեղաչափ, «Սինոֆարմ»՝ 5088 դեղաչափ, «Մոդեռնա՝ 20856 դեղաչափ, «Սպուտնիկ Լայթ»՝ 7306 դեղաչափ, «Պֆայզեր»՝ 17148 դեղաչափ: (Գծապատկեր 3 և 4):

4 https://ourworldindata.org/covid-vaccinations?country



Գծապատկեր 3. COVID-19-ի դեմ պատվաստումներ՝ ըստ դեղաչափերի 05.07.2022թ. դրությամբ



Գծապատկեր 4. COVID-19-ի դեմ պատվաստումներ՝ ըստ առանձին պատվաստանյութերի 05.07.2022թ. դրությամբ



Գծապատկեր 5. 18 տ. և բարձր տարիքի բնակչության ընդգրկվածությունը COVID-19-ի դեմ պատվաստումներում՝ 05.07.2022թ. դրությամբ

Հանրապետությունում COVID-19-ի դեմ առաջին դեղաչափ պատվաստումների կատարողականի ցուցանիշը՝ ըստ 18 տ. և բարձր տարիքի բնակչության թվաքանակի տատանվում է 38.3%-ից 57.6%-ի սահմաններում, միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 50.5%: Առավել ցածր ցուցանիշ գրանցվել է Տավուշի մարզում՝ 38.3%, Սյունիքի մարզում՝ 42.2%: Առավել բարձր ցուցանիշ գրանցվել է Արարատի մարզում՝ 57.6%, Արագածոտնի մարզում՝ 54.9%, Երևան քաղաքում՝ 53.9%: (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշներ՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի, 05.07.2022

Մարզ/ք. Երևան	1-ին դեղաչափ, % /18 տ. և բարձր բնակչության թվից /	2-րդ դեղաչափ, % /18 տ. և բարձր բնակչության թվից /	Բուստեր դեղաչափ%, /18 տ. և բարձր բնակչության թվից /	1-ին դեղաչափ, % /ընդհանուր բնակչության թվից /	2-րդ դեղաչափ, % /ընդհանուր բնակչության թվից /	Բուստեր դեղաչափ, %, /ընդհանուր բնակչության թվից /
Արագածոտն	54.9	48.1	3.0	41.0	35.9	2.3
Արարատ	57.6	53.0	4.5	43.4	39.9	3.4
Արմավիր	49.3	45.2	2.9	37.6	34.4	2.2
Գեղարքունիք	47.6	41.5	1.9	36.0	31.4	1.4
Լոռի	45.7	41.5	2.1	34.2	31.1	1.6
Կոտայք	49.5	45.5	2.2	37.0	34.1	1.6
Շիրակ	45.0	40.3	2.3	33.8	30.3	1.7
Սյունիք	42.2	36.2	1.0	33.3	28.6	0.8
Վայոց ձոր	49.1	44.4	1.2	37.9	34.3	0.9
Տավուշ	38.3	34.6	1.2	29.5	26.6	1.0
Երևան	53.9	47.8	2.9	41.5	36.7	2.3
ՀՀ	50.5	45.2	2.6	38.4	34.4	2.0

65 տարեկան և բարձր տարիքի բնակչության շրջանում COVID-19-ի դեմ երկրորդ դեղաչափ պատվաստումներում ընդգրկվածության առավել ցածր ցուցանիշ գրանցվել է Սյունիքի մարզում՝ 28.8%, Տավուշի մարզում՝ 32.5%, Շիրակի մարզում՝ 39.8%: Առավել բարձր ցուցանիշ գրանցվել է Արմավիրի մարզում՝ 50.8%, Արագածոտնի մարզում՝ 51.3%, Արարատի մարզում՝ 49.2%:

Աղյուսակ 4. COVID-19-ի դեմ պատվաստումներում ընդգրկվածությունը 65տ. և բարձր տարիքի բնակչության շրջանում

Մարզ/ք.Երևան	65տ. և բարձր բնակչության թիվ	1-ին դեղաչափ	%	2-րդ դեղաչափ	%	Բուստեր	%
Արագածոտն	12766	7521	58.9	6548	51.3	525	4.1
Արարատ	27039	14510	53.7	13290	49.2	1623	6.0
Արմավիր	26414	14564	55.1	13416	50.8	1116	4.2
Գեղարքունիք	22804	11744	51.5	10419	45.7	598	2.6
Լոռի	27995	10669	38.1	9921	35.4	652	2.3
Կոտայք	26512	12396	46.8	11535	43.5	749	2.8
Շիրակ	26656	11486	43.1	10599	39.8	879	3.3
Սյունիք	18549	6110	32.9	5348	28.8	222	1.2
Վայոց ձոր	6181	2709	43.8	2525	40.9	106	1.7
Տավուշ	17192	6183	36.0	5589	32.5	233	1.4
Երևան	160827	65647	40.8	61746	38.4	5189	3.2
ՀՀ	**372935**	**163539**	**43.9**	**150936**	**40.5**	**11892**	**3.2**

*Դեղին գույնով ընդգծված են ցածր ընդգրկվածության ցուցանիշները

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ընդհանուր հաստատված դեպքերի շրջանում պատվաստված անձանց համամասնությունը՝ ըստ դեղաչափերի հետևյալն է.

05.07.2022թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ընդհանուր հաստատված 423417 դեպքից 1 դեղաչափ պատվաստված է 15451 անձ, որը կազմում է 3.6 %, 2 դեղաչափ պատվաստված է 36792 անձ, որը կազմում է 8.7%, 2 դեղաչափ պատվաստումից 14 օր հետո՝ 34625 անձ, որը կազմում է 8.2%, բուստեր դեղաչափով պատվաստված է 447 անձ, որը կազմում է 0.1%:

Ստորև ներկայացվում է պատվաստումից հետո գրանցված COVID-19-ի դեպքերի համամասնությունն՝ ըստ դեղաչափերի և առանձին պատվաստանյութերի.

2 դեղաչափ պատվաստումից 14 օր հետո անձանցից 8.2%-ի մոտ պատվաստումից հետո գրանցվել է կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19):



Գծապատկեր 6. 2 դեղաչափ պատվաստումից 14 օր հետո գրանցված COVID-19 դեպքերի թիվը՝ ըստ առանձին պատվաստանյութերի, 05.07.2022թ. դրությամբ

Աղյուսակ 5. COVID-19-ի դեմ ամբողջական պատվաստված անձանց հոսպիտալացման հաճախականությունը

COVID-19-ի դեմ ամբողջական պատվաստված անձանց հոսպիտալացման հաճախականությունը	
Հոսպիտալացում, %	0.19
Վերակենդանացման բաժանմունքներում հոսպիտալացում, %	0.02

ՀՀ-ում 05.07.2022թ. դրությամբ երկու դեղաչափ պատվաստված անձանցից հոսպիտալացվել է 1887 անձ (0.19%), այդ թվում՝ վերակենդանացման բաժանմունքում գտնվողներից 191 անձ (0.02%):

COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՍԵՌԻ և ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ



Գծապատկեր 7. COVID-19-ի դեմ պատվաստումներում ընդգրկվածությունն ըստ սեռի



Գծապատկեր 8. COVID-19-ի դեմ պատվաստումներում ընդգրկվածությունն ըստ տարիքային խմբերի

COVID - 19 - ի դեմ պատվաստումներում ընդգրկվածությունը՝ ըստ սեռի և տարիքային խմբերի



	12-17 տարեկան	18-34 տարեկան	35-64 տարեկան	65+ տարեկան
💉	1.5 %	46.5 %	5.37 %	43.9 %
💉💉	1.1 %	40.2 %	49.1 %	40.5 %
💉💉💉	0	2.1 %	2.8 %	3.2 %

05.07.2022

Առողջապահության Նախարարություն
Ministry of Health of the Republic of Armenia

COVID-19-ի դեմ պատվաստումներում ընդգրկվածության պատկերն ըստ սեռի հետևյալն է՝ COVID-19-ի դեմ պատվաստումների առաջին դեղաչափ պատվաստումներում տղամարդկանց ընդգրկվածությունը 58.3% է, կանանց ընդգրկվածությունը՝ 43.0%, երկրորդ դեղաչափ պատվաստումներում տղամարդկանց ընդգրկվածությունը 53.2%, կանանց ընդգրկվածությունը՝ 38.2%, բուստեր դեղաչափ պատվաստումներում տղամարդկանց ընդգրկվածությունը՝ 3.1%, կանանց ընդգրկվածությունը՝ 2.3 %:

COVID-19-ի դեմ պատվաստումներում ընդգրկվածությունն ըստ տարիքային խմբերի ունի հետևյալ պատկերը՝ ընդգրկվածությունն առավել ցածր է 65 տարեկան և բարձր տարիքային խմբում, մասնավորապես՝ առաջին դեղաչափ պատվաստումներում ընդգրկվածությունը 43.9% է, երկրորդ դեղաչափ պատվաստումներում ընդգրկվածությունը՝ 40.5%, բուստեր դեղաչափ պատվաստումներում ընդգրկվածությունը՝ 3.2%:

ԱՂԻՔԱՅԻՆ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՌՆԿՈՒՄՆԵՐ

Աղիքային վարակիչ հիվանդությունները կղանքաբերանային (ֆեկալ-օրալ) մեխանիզմով փոխանցվող վարակիչ հիվանդությունների խումբ են: Աղիքային վարակների հարուցիչներն են Enterobacteriaceae ընտանիքի մանրէները (որովայնային տիֆ, պարատիֆեր, այլ սալմոնելաներ, կամպիլոբակտեր, շիգելլաներ, ախտածին աղիքային ցուպիկ, յերսինիա էնտերոկոլիտիկա, կլոստրիդիում դեֆիցիլե և այլն), մի շարք վիրուսներ (ռոտավիրուս/rotavirus, նորվոլք/ Norwalk, էնտերովիրուսներ/Enterovirus, վիրուսային հեպատիտ Ա, Ե/Hepatits A, E և այլն) և միաբջիջ օրգանիզմներ (ամեոբա/Amoeba, ժիարդիա/Giardia, բալանտիդիում/ Balantidium, կրիպտոսպորոդիում/ Cryptosporidium և այլն):

Վարակի աղբյուրը հիվանդ մարդն է ու մանրէակիրը: Աղիքային վարակիչ հիվանդությունները բնորոշվում են մարդու աղեստամոքսային ուղու ախտահարումով, ինչն արտահայտվում է փորլուծությունով և օրգանիզմի թունավորումով:

Վիրուսներով պայմանավորված աղիքային վարակիչ հիվանդությունների դեպքում, աղիների ախտահարման հետ մեկտեղ կարող է դիտվել նաև վերին շնչուղիների բորբոքում, Վիրուսային հեպատիտ Ա-ի դեպքում՝ հիվանդության սկզբում բնորոշ է վերին շնչուղիների կատարալ բորբոքումը:

Աղիքային վարակիչ հիվանդությունները տարածվում են ջրի, սննդի միջոցով, ինչպես նաև կենցաղակոնտակտային ճանապարհով: Նրանց բնորոշ է սեզոնայնությունը՝ դեպքերն ավելի շատ արձանագրվում են տարվա տաք շրջանում, երբ առկա են բարենպաստ պայմաններ հարուցիչների աճման և բազմացման համար: Սննդամթերքը բարենպաստ պայմաններում վարակիչ հիվանդությունների հարուցիչների համար հանդիսանում է սննդային միջավայր՝ նպաստելով դրանց աճին և բազմացմանը: Ամռանը լավ չլվացված մրգերը և բանջարեղենը, համապատասխան պայմաններում չպահված սննդամթերքը, ոչ ճիշտ պատրաստված ուտեստներն ավելի հաճախ են դառնում աղիքային վարակիչ հիվանդությունների բռնկումների առաջացման պատճառ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2015-2022ԹԹ. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՂԻՔԱՅԻՆ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՌՆԿՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 6. ՀՀ-ում 2015-2022 թթ. արձանագրված աղիքային վարակիչ հիվանդությունների բռնկումները

Տարեթիվ	Ընդամենը	Սննդային	Ջրային
2015	15	11	4
2016	3	2	1
2017	5	2	3
2018	6	3	3
2019	7	6	1
2020	2	1	1
2021	18	14	4
2022 (1-ին կիսամյակ)	7	4	3

Ինչպես երևում է աղյուսակից, գերակշռում են սննդային գործոնով պայմանավորված բռնկումները:



Գծապատկեր 9. Բռնկումների շարժընթացը



Գծապատկեր 10. Բռնկումների համամասնությունն ըստ տարիների

2022 թվականին Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների թվով 7 բռնկում, որից 4-ը պայմանավորված սննդային գործոնով, 3-ը՝ ջրային:

Սննդային բռնկումներից 2-ն արձանագրվել է Երևան քաղաքի հանրային սննդի կազմակերպություններում, հայտնաբերվել են Բացիլուս ցերեուս, պրոտեուս միրաբիլիս և սալմոնելա հարուցիչները, 2-ը՝ Կոտայքի մարզի դպրոցական կազմակերպությունների աշակերտների և նրանց ուղեկցող մեծահասակների շրջանում՝ էքսկուրսիայի ժամանակ, հայտնաբերվել է սալմոնելա, ոսկեգույն ստաֆիլակոկ, կլեբսիելլա, ցիտրոբակտեր հարուցիչները: Բռնկումների առաջացման պատճառը սննդամթերի պատրաստման, պահպանման և տեղափոխման կանոնների խախտումն է:

Ջրային բռնկումներից 2-ն արձանագրվել է Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն և Սոլակ համայնքներում, հայտնաբերվել են ռոտավիրուս, նորովիրուս և ախտածին աղիքային ցուպիկ: Մեկն արձանագրվել է Արագածոտնի մարզի Փարպի համայնքում, հայտնաբերվել են նորովիրուսներ: Բռնկումների պատճառ է հանդիսացել նշված բնակավայրերի խմելու ջրի աղտոտումը:


2015
0
1 - 50
51 - 100
101 - 250
251 - 500
501 - 1000
0 15 30 60 90 120 km
NCDCP/Ministry of Hea
Map author: S. Melikjan


2016 (I-VIII)
0
1 - 50
51 - 100
101 - 250
251 - 500
501 - 1000
0 15 30 60 90 120 km
NCDCP/Ministry of Health
Map author: S. Melikjanyan


2017
BRNKUM2017
Armenia_Regions
brnkum2017


2018
BRNKUM2018
Armenia_Regions
brnkum2018


2019
LORI
TAVUSH
SHIRAK
KOTAYK
ARAGATSOTN
GEGHARKUNIK
ARMAVIR
YEREVAN
ARARAT
VAYOTZ DZOR
SYUNIK
Brnkum2019


2020
brnkum2020


2021
brnkum2021

The COVID-19 epidemic situation in the world is currently relatively stable. As of July 4 (11:32 pm CEST) 554,455,663 confirmed cases of the disease were registered all over the world, of which 832.420 were new cases and 6,361,600 (1.14%) were death cases.[5][6] Cases have been reported in 223 countries, and the most cases were registered in the following countries:

Country	Reported cases
USA	**89,533,825**
India	**43,518,564**
Brazil	**32,502,469**
France	**31,208,925**
Germany	**28,394,995**
United Kingdom	**22,741,065**
Russian federation	**18,439,759**
Korea	**18,395,864**
Italy	**18,768,871**
Turkey	**15,123,331**
Spain	**12,818,184**

Table 1. List of countries with the highest incidence



Figure 1: Proportion of cases by WHO regions

5 https://covid19.who.int/

6 https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019

As of July 4, 2022, 423.417 cases were registered in the Republic of Armenia (14309.5 per 100,000 population), of which 290 (0.01%) received treatment, 412.817 (97.4%) recovered, 8626 death cases (291.5 per 100,000 population) were registered, the mortality rate was 2%.

During the last 14 days, 313 cases of the disease were registered (10.6 cases per 100,000 population), which increased by 219% compared to the previous period(98 cases, 3.3 cases per 100,000 population).

The share of positive test results in the last 14 days was 3.1% compared to 0.5% in the previous 14 days period.

During the last 7 days, 174 cases of the disease were registered, which increased by 25% compared to the previous period (139 cases).

The share of positive test results in the last 7 days was 3.4%, while last week it was 2.8%.

At the moment, the infection reproduction rate (for 7 days) is Rt=1.28.

Table 2. COVID-19 cases by gender and age

Age group	Number of cases 6/6/2022 - 6/19/2022		Number of cases 6/20/2022 - 7/3/2022	
	Male	Female	Male	Female
18-29	10	9	40	39
30-59	45	30	98	120
60+	0	0	0	0
TOTAL	**55**	**39**	**138**	**158**
	94		**297**	



Figure1: COVID-19 cases by gender and age

Picture 1. COVID-19 morbidity by gender and age



Over the last 14 days, 10.6 cases of the disease were registered per 100,000 population, and the share of positive test results in the last 14 days was 3.1%, which is considered as "green zone"[7] by EU standards. Two weeks ago, the above figures were 3.3 cases per 100,000 population, respectively. The share of positive test results was 0.5%.

FIGURE 2. Risk zones according to EU standards



7 https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2021/06/14/covid-19-council-updates-recommendation-on-free-movement-restrictions/

Variants of Concern (VOC) list includes the most dangerous variants of COVID-19, the mutations of which have increased the speed of the COVID-19 transmission from person to person, changed the symptoms of the disease, or made it more resistant to vaccines and drugs.

WHO label	*Country first detected*	*Year and month first detected*	*Date of decision (Decree)*
Omicron BA.1	South Africa	November, 2021	27.11.2021
Omicron BA.2	The Philippines	November, 2021	22.02.2022
Omicron BA.4	South Africa	January, 2022	
Omicron BA.5	South Africa	February, 2022	

Variants of Interest (VOI) list includes those variants of COVID-19 with increasing number of infection cases, which could imply a significant impact on transmissibility in more regions and there is also an evidence that their mutation can change properties of virus.

WHO label	*Country first detected*	*Year and month first detected*	*Date of decision (Decree)*
Omicron BA.2 +L452X (x)	n/a		

De-escalated variants list includes: 1) the variant is no longer circulating, 2) the variant has been circulating for a long time without any impact on the overall epidemiological situation, 3) scientific evidence demonstrates that the variant is not associated with any concerning properties.

WHO label	*Country first detected*	*Year and month first detected*	*Date of decision (Decree)*
Alpha	United Kingdom	September, 2020	VOC՝ 29.12.2020թ De-escalation՝03.09.2021թ
Delta	India	December, 2020	24.05.2021թ
Eta	United Kingdom / Nigeria	December, 2020	VOI՝ 22.04.2021թ De-escalation՝03.09.2021թ
Kappa	India	December, 2020	VOI՝ 22.04.2021թ De-escalation՝03.09.2021թ
Iota	USA	December, 2020	VUM՝ 29.04.2021թ. De-escalation՝03.09.2021թ
Theta	Philippines	January, 2021	VOI՝ 22.04.2021թ De-escalation՝03.09.2021թ
Zeta	Brazil	January, 2021	VUM՝ 29.04.2021թ. De-escalation՝03.09.2021թ

Epsilon	USA	December, 2020	VOI՝ 22.04.2021թ De-escalation՝22.07.2021թ
Mu	Columbia	January, 2021	VOI՝ 29.04.2021թ De-escalation՝09.03.2022թ.
Lambda	Peru	December, 2020	VOI՝ 22.07.2021թ De-escalation՝ 09.03.2022թ.
Beta	South Africa	September, 2020	VOI՝ 29.12.2020թ De-escalation՝09.03.2022թ
Gamma	Brazil	December, 2020	VOI՝ 29.12.2020թ De-escalation՝09.03.2022թ
XD (Delta+Omicron BA.1)	France	January, 2022	VUM՝ 09.03.2022թ
Variants under monitoring / Alerts for Further Monitoring (VUM) WHO list includes variants, mutations of which could change the properties of the virus and pose a further threat. There is little information about there variants to be included in "Variants of Interest" list.			
WHO label	***Country first detected***	***Year and month first detected***	***Date of decision (Decree)***
Omicron BA.3	South Africa	November, 2021	

COVID-19 VACCINATION IN REPUBLIC OF ARMENIA AS OF JULY 5: STATISTICAL DATA

As of July 5, 2022, more than 12.12 billion doses of vaccine have been administered worldwide. About 66.7% of the world's population has been vaccinated against COVID-19. 6.08 million doses of vaccine are administered daily worldwide. The highest prevalence of COVID-19 vaccination in the general population was recorded in the United Arab Emirates - 98.01%, Singapore - 91.65%, Chile - 91.54%, Cuba - 88.14%.[8]

As of July 5, 2022, 2217618 vaccinations have been carried out in the republic of Armenia. The first dose: 1138990 vaccines, of which 219933 doses are "AstraZeneka", 49744 doses - "CoronaVac", 173706 doses - "Sputnik-V", 486706 doses - "Sinopharm", 183489 doses - "Moderna", 310 doses - " Covishield", 6762 doses - "Sputnik Light", 18329 doses - "Pfizer", 11 doses are "Janssen" vaccines. The second dose: 1019409 vaccines, including "AstraZeneka" - 189485, "CoronaVac" - 47056, "Sputnik-V" - 163584, "Sinopharm" - 438988, "Moderna" - 161599, "Covishield" - 125, "Pfizer" – 18572. Booster dose: 59219 vaccines, including "AstraZeneka" - 6740, "CoronaVac" - 473, "Sputnik-V" 1608, "Sinopharm" - 5088, "Moderna" - 20856, "Sputnik Light" - 7306, "Pfizer" - 17148 (Figure 1 and 2).

8 https://ourworldindata.org/covid-vaccinations?country



Figure 3. COVID-19 vaccination by doses as of 05.07.2022



Figure 4: COVID-19 vaccination by vaccines as of 05.07.2022



Figure 5: COVID-19 vaccination coverage of 18 years and older population as of 05.07.2022

The coverage rate of the first dose of COVID-19 vaccines in the country for 18 years and older population varies from 38.3% to 57.6%, the national average rate is 50.5%. The lowest rate was registered in Tavush marz - 38.3%, in Syunik marz - 42.2%. The highest index was registered in Ararat marz - 57.6%, in Aragatsotn marz - 54.9% and in Yerevan - 53.9% (Table 1).

Table 3: Vaccination coverage by marzes and Yerevan, 05.07.2022

